

Թեամբ չե. եւ առաջին անհարկով իսկ կը նկատե ընթերցողն թե հոս կամ աղաւաղութիւն մ'են-
թապարեւու եւ կամ ընտրե՛ նշանակութիւնն
նոյն կը մտի եւ կ'առաջարկե ընթերցողը "Ձմ
արժանի թագաւորութեան նոսրացնել կարա-
ցեն", (ԲՁՄ. 1906, էջ 207): Սակայն այս
ընթերցողածը, ինչպէս կը գիտե Յեր-Սահա-
կեան (ԲՁՄ. 1907, էջ 185), կապուած ե
գժուարութեանց՝ 1. անսովոր խնդրաւորութեան
եւ 2. "ձայնական տեսակետով շատ հեռու,
ըլլալուն պատճառաւ Ե. գժուարութիւնն թե-
րեւս հարթութի՝ "զմ արժանի թագաւորութեան"
նստացանել, իմանալով, իրբեւ թե խորհուած
ըլլար. թագաւորութեան արժանի զմ շատե-
ցնենք: Է. Ս. Յեր-Սահակեան կ'ուզէ կարգաւ
նախնիցացանել, "այսինքն Հաղարաւստայ, որ
էր նախագահ խորհրդեան, զմ ջուրընեն թա-
գաւորութեան արժանի: Բայց այս ալ շատ գո-
հացուցիչ է՛րեւաբ տակաւին եւ փարպեցւոյ
խօսքին սահուն ընթացքը կը սուժե: Կարելի չէ՛
արդեօք պահել անփոփոխ "նմանեցուցանեմ"
եւ իմանալ "ընտրել", դեռ բառագիրքներու
մէջ շարունակ նշանակութեամբ: Փաւստոս կը
գրէ Ըահակայ կաթողիկոս ընտրուելու մասին.
"Ապա իրբեւ ոչ ոք զՅր ի ասենն Գրիգորի
այժ (կաթողիկոսութեան) օրձոն, ապա նմե-
ցուցիչ շահակ ո՞նն անուն ի սոհմէ զաւակին
Աղբիմոնս եպիսկոպոսին, եւ արձակեցին օճու-
լու ի Կեսարիա (Գ. Ժ. էջ 39 հրտ. Պատկ.),
եւ այլուր (Գ. ի. 44) կը գնե Յիրանայ յերանը.
"Նմանեցուցիչ (սպասաւորաց կ'ուղղուի) տեղիս
գիւղնագիւա որոց ինչ, որով լոկ գրօսուցուք
զիս (զԱրարազ Ըապուհ): Երկու դէպքիս մէջ
ալ նմանեցուցիչ" պատշաճեցնել: այս ե արժանի
համարիլ, գատել, կամ մէկ բառով ընտրել
իմաստով ե, ինչպէս կը հասկընայ Պատ-
կանեան փարպեցւոյ խնդրական խօսքն ալ
(Տմն. Բուք. իւր հրտ. էջ 44 Են.):
Առաջին դէպքի մէջ ամենայնիւ համաձայն ե
փարպեցւոյ գործածած իմաստին. եւ որչափ
կը տեսնուի, փարպեցի աչաց առջեւ ու-
նեք յիշեալ տողը գրելու ժամանակ փաւս-
տոսի այս խօսքը: Նմանեցուցիչի այս նշա-
նակութեամբ գործածութեան թեւեւ ուրիշ օրի-
նակ Եանթ չէ ինձ, բայց առումն հակառակ չէ
ուսկեգարեան հայերենի ոգայնս Հիները շատ կը
սիրինն բայիս արմատեն անանցուած նմանեցու-
կամ նմանեցուցիչ բառին "յարմար, պատշաճեցիչ,
իկողագոյն", իմաստով կիրաւորութիւնը. այսպէս

շատերեն յիշեք Ոսկ. Մատթէի Գեղնութեան
սա խօսքը. "Աւետարանն նորա զԵսայ իւրոց
արուեստիցն նմանեցուցիչ կողաց զպատճոյն ազա-
լուութիւն, եւն (էջ 4), որ Եանարենն ունի
օւնթուհ, այս ե՛ գիկողագոյնս, պատշաճագոյնս:
Ագամանգեղոս (էջ 190) աւելի պարզ գրից
մէջ ունի "գիկողագոյն եւ նմանեցուցիչ բանիւք":
Ուրեմն գրեթե նոյն վերը նշանակուած պատ-
շաճեցնել, արժանի գատել, իմաստին: Երկու
օրինակի մէջ (առ Բուք. եւ Փարպ.) նմանեցու-
ցանելի գործածութեան եղանակն եւ զտ օրձոնի
ի՞նչ նմանեցուցանել. այսինքն զմէկը բանի մը ար-
ժանի գատել, նմանեցնել, կամ շէկը, բա՛ իջնու-
արել, Եթե կ'արժե յիշատակել, յեանններեն
Անանիա Ըիրակացի կը գործածե բայս ուղղակի
համարել իմաստով ալ՝ հայցական խնդրով. "ի
շարժել ամպոց) զԸրիմոս բարձունս ի հեռաս-
տանէ՛ շարժուած նմանեցուցանեմք" Է. Բ. 432:

Բայց Երբեւս առաջարկուի նաեւ փաւս-
տոսի մէջ սրբաբարութիւն: Է. Նահակեան կը
զգուշանայ (ԲՁՄ. 1906, էջ 813) երկու տեղն
ալ: Աճառեան (ԲՆՍ. 1903, էջ 194) "շատ
անմիտ, գտնելով փաւստոսի ա. խօսքին մէջ
նմանեցուցանել եւ ընտրել իմաստն "անսովոր եւ
անհասկանալի, կ'ուղղէ "նստացն", իսկ
Բ. խօսքի վրայէն լուութեամբ կը օտհո՛ւ Ըստ
մեջ շատ աւելի անիմաստ կ'ըլլար հոս "նստու-
ցանել, եւ անյարիր տեղոյն: զասն զի անըմ-
բունելի ե թէ ինչպէս առանձն ձեռնագրութեան
խաւրելու ի Կեսարիա՝ կընային Հայք բարձրա-
ցնել զԸահակ հայրապետական աթոռը: Այսպէս
Յուսիկ, թեւեւ "յաջորդեաց զտեղի հայրապե-
տացն Հայոցն միաբան ընտրութեամբ, սակայն
առաջին անգամ Կեսարիայէն գառնալն վերջը
"նստուցանելին զցանկալի մանուկն Յուսիկ յա-
թոռ հայրապետական" (էջ 26): Նոյնպէս
նստու եւ փաւսն (էջ 88). նոյնպէս անշուշտ
— ըստ օրինաց — նաեւ Ըահակ Կեսարիայէն
գարձեն վերջը "յաջորդեաց զտեղի հայրապե-
տացն (էջ 89) բարձրանալով աթոռը: Այս
եր սովորական կարգը: Ե. Ս.



1906 ԹԻՐԸ ԿՈՎՈՍՍԵՆՑՈՅ ԿԵՆՏՐՈՆԻ
I. ՆԵՍՈՐԻՔ ԶԲՁԵՆ

1. Դիտարկութիւններ: Մշակական
կուսակցութեան պարտութիւնը: — սխալ
հայեացք այդ մասին. — Մշակական

կուսակցութիւնը եւ «Մշակ», — Կովկասեան մամուլը եւ «Մշակ», — Նոր տասնը:

Կովկասահայ կեանքի 1906 թիւն է յօդուածի քննութեան առարկան, եւ այդ պատճառով թարմ եւ հանրածանօթ են բոլոր նիւթերը: Բայց ինչպէս ամէն թուական, այդպէս նաեւ 1906 թուականը մի պայմանական սահման է մտքի համար, մինչդեռ հասարակական կեանքը այդ կարգի սահմանները մերժում է. նոր քննութիւնը ընդարձակում է դէպի նստորջրմանի խորքերը այն չափով որով հասարակական երեւոյթները այդ պահանջում են իրենց հասակով. մանաւանդ հասարակական այնպիսի երեւոյթներ, որոնք նշանակութիւն ունին կեանքի եւ գաղափարի հին կուռքերը կործանելու եւ երբեմն նաեւ նոր կուռքերով հինը փոխարինելու: 1906 թիւը նշանակութեամբ այդպիսի գիտաւոր երեւոյթների տիրապետութեան մի շրջան բանալու կոչումով էր կովկասահայ կեանքի համար, եւ, ինչպէս կը տեսնենք շուտով, արդարեւ՝ պատմական գիտակից եւ գործուն տարրերի աղմուկ, կեանքը զգաց բուսելի այդպիսի թելադրութիւնը: Բնասի մի կողմից բնական է ահա հաշու պահանջել այդ թուից. արդեօք՝ հսկայական որեւէ քայլ կատարեց կեանքը այդ թուին. սահմանափակու մենքից մըր եւ ինչպէս ոտնատակ տրեց նա եւ իւր ասիւրասան գլուխը դէպի մը հովերը ցցեց: Իւս միւս կողմից անբնական կը լինէր եւ անալ որոնել այդ հարցերի պատասխանը միայն 1906 թուի նիւթերի մէջ. ըստ որում ինչպիսի ունի մի բնատրութիւն, որը հրամայողաբար մեզ ձգում է նստորջր տարիների ծոցը: Իւս ահա այդ անխուսափելի պահանջով, 1906 թուին կանխող մտաւոր շրջանները ուր միտքը կատարել է իւր յաղիմանակները, մեր բուն ինչպիսի կից կ'ուեննան իրենց յաստակ ստորագրութիւնը:

Երկրորդ ծանայտումը, որ հարկ է առնել կեանքի, հետեւեալն է.

Սրոշ պահանջներ զգում է աղերիս գրողը, որպէս զի կարողանայ նա պատկերայնել ժամանակակից փոթորկալից մի շրջան եւ բնորոշել այդպիսի շրջանի վայրկեանական էրեւելները: Իւս հասարակ նոյնատեսակ աշխատութեան համար հեղինակից

պահանջում է ստան եւ անկուսակցական վերաբերմունք, պայծառ իրեայների անկակածելի գիտակցութիւն, — եթէ է միակողմանի եւ թիւր ուղղութիւնից ինքնզինքն նա ինամել պէտք ունի: Մինչդեռ մարդ, իրրեւ արեան եւ մարմնի մը բարդ գունգուած առաւել կամ նուազ չափով միայն օտար է յիշած յատկութիւններին, թող թէ ասիացի տարարիւն մարդը, եւ եւս առաւել եւ ժամանակակից, եւ մասնակից, ևւ երթակայակից անհատը:

Եւր ծանր շարքների դէմ մի հեղինակի դեռ կարող է զիտուել եւ կռուուել այնքան, որքան նրա անձնական եւ ետական ունակութիւնները թոյլ կը տան, եթէ քննութեան առարկան ինքը փորձաքարը չկազմէ. եթէ՝ հեղինակի բոլոր ջանքերի հասկառակ, նա այն առարկան ամբողջապէս յօրինուած շինէ կառիկայրերից, որոնք միայն անդուներ զու տանին նոցա, որոնք անզգոյշաբար ձեւեկիք կ'ընդունին այն զատիվայրերը:

Իւս ահա 1906 թիւը այդպիսի մի դժուարապատում շրջան է նկատուած պատմութեան մէջ եւ նրա պատկերը առաջին հայեաղքից ցոյց է տալիս մեր ասածի իրաւացիութիւնը:

Կուշակցութիւնը այդ շրջանի կենդրանն էր. նրանով զբաղուեց կովկասահայ ինտելիգենցիայի թէ այն մասը, որը համարում էր, եւ թէ այն մասը որը հսկաւ կրում էր: Այդպիսիական մասուլը, եւ մասնաւոր թաղութիւնը, ընթերցող բազմութեան հետաքրքրութիւնը ի հաշիւ վաշնակցութեան յօրինեցին — համակողմները նպաստաւոր պատկերով, հակակողմները աննպաստ: Եւ որովհետեւ ամբողջի հետաքրքրութիւնը հոգեբանական այն երեւոյթներից է, որոնք սկսում են եւ աւարտուում սկանդալի շրջանում, ուստի վաշնակցութիւնը, իրրեւ կուսակցութիւն եւ կազմակերպութիւն, զարմա երկուտեք սկանդալաւարաւ երիտասարդութեան եւ ամբողջի համար նրանց բնական հակումի պատքեցուցիչ վիճեբան: «Մշակ», Կայրուալիստներին եւ կղերականներին զրգուեց վաշնակցութեան դէմ ասելով, որ նա եկեղեցին ընդհանուր յեղափոխութեան գործին եւ փորձին մատուակողջ պիտի լինէ: «Սանգ» յայտարարեց որ «Մշակ» մատու

նույն էան հետ ուղիղ մի գծի վրայ է կանգնած եւ «Մշակի» աշխատակիցներից մի նշանաւոր մասը հեռացաւ նրանից եւ դիմեց «Չանգին», «Սարգեան» «Չանգոր» հասարակաց իւր «Մուշնով» «Մշակ», սակ վրայ, իսկ «Չանգի ամպրոպային» որոտներից եւ «Յառաջի» բոցակիզ պատերից «Մուրճ» ու «Մշակ» պաշտպանութիւն որոնեցին մերթ փախաճաների ծայքերի մէջ ծածկուելով, մերթ Նճանովներէ եւ Նգարովներէ պալատները փախուտ տարով, «Չանգոր» ճեղքուած յայտարարուեց «Մշակից», «Վաշնակցու» թեան վերջին ժամի լաւ կան կիր դառնալու, իսկ «Մշակը» վայր ընկաւ Նրճրուտու գաբակից միշտե Սպանգարի գարշապարը, դարարած «Նոր-Վարի» տեղը բռնեաւ: Այ դք կարող էր ասել այդ փայններին, թէ կը գաղտնիքն այդ սնտաւմ գայլերը հայ անպատի վրայ ոռնալուց թէ ոչ, եւ թէ վաղը արեւը արեւմուտքէն պիտի ծագէ թէ կրկին արեւելքէն: Նոյնպէս էր խիֆիկում: Իսկ գաւառներում աւելի հանգիստ չէր: հասարակական իրէւլաների ապրիւր ընթացողութեան մի շրջան էր այն, եւ խիֆիկից քառոր տարածած փառած էր նաեւ գաւառներում: այն հասկանալի տարբերութեան, որ գաւառում առտեւ կրկըր քան միտքն էր առաջնորդում մարդկանց եւ անձնական տգեղ հակու միւրի անպատկառ իրագործումը շատ անգամ լայն շափեր էր ստանում եւ հասարական ընդհանրական շրջանները վայրակում: Նոյն շրջանում էր, որ Նրան եւ Մասովէոս վարդապետները, Միհրան եւ Հայրուհներ, Նէօ եւ Նուաքեյեան, կրքաւ մոլ լրագրախօսը եւ ցասմակալած երիտասարդի արդար գնդակը, Վաշնակցական եւ Հնչակեան խմբերը, գառողն ու գառուողը, պողարն ու մեղաւորը — բոլորը, փոխանակ իրեք իրենց համար տարրական կրթութեամբ կրթուելու, շտապեցին ինքնակոչ թեմից հանդիսանալ պլըն: Մինչեւ անգամ Նքմիւսմիւր մասնակցեց այդ քառսին: այնտեղ, կղերի այն բռնում, կղերը յետին կարգը ձգուեց հակասարար, եւ կովկասահայ բուն աշխարհական սահմանադիր ժողովի անունը դրացիների արդար ցասման մի յարուած հարուած հասցրեց: հին Նրմիւր բարձր պրպաւ անհունի մէջ ստաւառնելու շխարհումայով իրականութիւնը ինտա-

մէ, որը ինքն էր ստեղծել, մինչդեռ իւր ձագերը ներքեւում թեւազուրկ իրենք՝ սահմանադուրի եւ օրինազուրկ հոչակիցին առաջին սահմանադիր ժողովի մանկական ճիւն ու աղաղակը: նոքա վայր թեօթափուեցին Հայկեան Համաստեղութիւնից իրենց առտուպի երկար պոնն ու կոչը խոթելով հայկական քաղաքակրթութեան մատաղ սրտի մէջ:

Նհա 1906 թեու սկանդալների ընդհանուր պատկիրը անկապ, անտորոգիր, անգոյն, ամբողջ միշտ կերակրուած էր այդ սկանդալներով, առանց կարողանալու տարբերը մնայունը անցաւորից, գաղափարականը անձնականից եւ յանցաւորից: խոյս-Փայսիւն որով կատարուած էին բոլոր հոգարարական եւ երեսփոխանական, գարուցական եւ դրամատիկական ժողովները եւ հաւասարաշափ մտանկցում էին թէ ինչ գիտեանոր եւ թէ գեղջուկը, որովհետեւ ժխորը, որ արիւսպետում էր մեճնորոտաին, եւ զբաղեցուցիչ էր եւ միշտ ոյծ ունէր:

Նորճ կանգ առնելով այդ բոլոր սկանդալներէ եւ ճակատամարտերի խաչածեւ հասրուածների տակ եւ քաղաքակրթական եւ բարոյական հայեւ ընդամէջ, միակ մի նպատակ ենք ունեցել: հրաւիրել մտքերին գէպի քննադատութիւն Ն. որոշ հարցերը եւ նիւթերը պատմական հետաքրքրութեան շարժման մէջ դնելով, մաքրելով նոքա սկանդալի արտաքին կերպարանից: 2. կովկասահայ երիտասարդութեան քաղաքական կեանքը, իւր բոլոր նշանաւոր երեսուցիներով, հանդիսադրելով նախորդ պատմական շրջանների հետեւանքով, եւ 8. Սահմանելով հայկական քաղաքական կեանքի ուղղութիւնն ու երեսուցիները որջ կովկասեան քաղաքական կեանքի ընդարձակ շրջանում: Ն. յս խնդիրներից առաջին երկուսը միաժամանակ եւ իրարից անբաժան կը քննուեն մեք, իսկ երրորդը ուրոյն դիրքով եւ մեր յօրուածի վերջում: Վննութիւնը կը կատարենք անկեղծ եւ ջերմ բարոյական զգացմունքների շրջանում, ինչպէս այդ մեք ենք հասկանում, եւ նրա համար պատասխանատու մեք կը լինենք բոլոր կուսակցութիւնների եւ կուսակցականների հասարակական եւ անձնական պահանջների հանդէպ:

1. Իրողութիւնները:

Ինչ որ կենդանի է նա շարժում է, ինչ որ չէ շարժում նա մեռնում է: Այսպէս էլ 1906 թիւն էր Արժանատի Համար. Արժանատի շարժում էր, նա կենդանի էր այդ թեւին: Եւ այն շարժման ամբողջ շրջանում ընդհարումներին մի անընդհատ շարժումներով ինչ հանդիսացրեց Արժանատի, թէպէտ այն բոլորից միայն հայկական մտքի շարժումն է մեր ուշադրութիւնը գրաւում այսօր: Առաջին հարցը այս է, թէ ինչով հանդիսացրուեց հայկական մտքի շարժումը: Ի հարկէ խաղաղ կուլտուրական տարրերի յառաջխաղացումն է մասին ոչ ոք կարող է մտածել. հայկական քաղաքական միտքը սակ եթէ մի շարժում անէր, այդ էլ մեծ բան էր. եւ հայկական քաղաքական միտքը արարուեալ արեց մի շարժում, որ նշանաւոր էր նրանով որ այն միակ շարժումն էր ոչ թէ 25 տարիների ընթացքում, սկսած 1880ական թեւերից եւ այսօր: Այսպէս է ահա 1906 թեւի նշանակութիւնը:

Հասարակական կեանքի մէջ շարժումները միշտ ընդհարումներով են երեւան եկել, առաջ փոքր շարժում ապա հետագայեւ ընդարձակ շրջաններով: Այսպէս աստուծառով շարժումները անէն տեղ եւ ամէն ժամանակ, իբրեւ ներքին գործած տարր, այս կամ այն բնաւորութիւնը յատկացրել են ընդհարումներին, որոնք արտաքին արտապայտութիւն են եղած ներքին տարրերի համար. շատ անգամ էլ ընդհարումները համեմատորէն բոլորովին այլ հետեւանք են առաջ բերել: քան ներքին շարժումը թեւադրել է ծոցաւ քայքայիսի դէպքերում գործելակերպն է միշտ եղած յանցաւորը եւ այդ չի խանգարել: որ ընդհարումը այս կամ այն բնաւորութեամբ կրկին իւր ներքին շարժման արդիւնքը նկատուի եւ ձանձուի:

Արժանատի հայ կեանքի մէջ 1906 թեւի շարժումը, ըստ արտաքին երեւումի, առաջ բերեց հինաւորաց հաստատուած մի կուսակցութեան խորտակումն. այդ խորտակման ընթացքը, իբրեւ հասարակական կեանքի մէջ կատարուած ընդհարման պատկեր, ցոյց տուեց, ինչպէս մեք կը տեսնենք իսկոյն, որ հարազատ թեւադրութիւն

է ընդհարումը իւր շարժման ուրեմն գործելակերպի սճը տարուած է միշտ անշիջ ծրագրով, — որ արդէն հասարակական կեանքի հաստուութեան առաջին վկայութիւնն է:

Այն խոսքը Աշխատական կուսակցութեան մասին է, որի խորտակումը թէ՛ Աշխատական Խորագիրը ընդունում է, եւ թէ՛ կեանքի մէջ կատարուած անկասկածելի մի իրողութիւն է: 1907 թ. յունուար 18 մէջ Աշխատական Խորագիրը իւր առաջնորդութեամբ գրեց. «Մենք այս պէս անկերպ, որոնք այսօր հայ-առակաւար կուսակցութեան մէջն են, փոքրամասնութիւնն էին կազմում: Այժմիսին կենդանական ժողովում. նորա մաքսոնցին խեղդող միջոցառումի դէմ: որքան կարող եղան, միայն համազգային կաթողիկոսական ընտրութիւնը Այժմիսինում Աշխատական կուսակցութեան մեծամասնութեամբ կատարուեց, այդ է յիշեցնում Աշխատական Խորագիրը գրելով որ Այժմիսինում 1906 թեւին, Աշխատական կուսակցութիւնը (= հայ-առակաւար կուսակցութեան) փոքրամասնութիւնն էր կազմում: Այնպէս վկայուած է կեանքի մէջ եւս երկու հինաւորաց կուսակցութեան խորտակուեց 1906 թեւին: կրեական եւ առաջադիմական. առաջինը խորտակուեց, որքանայ չունեցաւ, բայց ի մի երգիծարանական թեւերի մի պատկեր, երկրորդը, առաջադիմական, խորտակուեց, առաջ բերեց ժողովրդական ազատութեան կուսակցութիւն, սա էլ չքանայով առաջ բերեց կաղեւ կուսակցութիւնը, իսկ վերջինս անհետեւանք անցնելուց յետոյ տարւայ վերջում ստեղծուեց հայ-առակաւար կուսակցութիւնը: ըստ Աշխատական Խորագրի, իսկ ըստ այդո՞ հայ լիբերալների կամ հայ պրոգրեսիստների կուսակցութիւնը: — Այդտեղ կուսակցութիւնը ոչ մի առնչութիւն չունէր հայկական քաղաքական կեանքի հետ, եւ նա հէնց այդ պատճառով չքայտուեց: հայ-առակաւար կուսակցութեան այդ փոփոխութեամբ ոչինչ չիրոյնցի:

Այսպէս չէ Աշխատական կուսակցութիւնը. նա թէպէտ խորտակուեց եւ իւր հեղինակաւոր անունից զրկուեց, բայց չէքայտուեց եւ իւր ծոր անուններով եկաւ փորձեց կուլտուրական որոշ դիրք պահպանելու: Այդ բոլորը կատարուեց 1906

Թուին, բայց ամբողջ ժամանակ չգտնուեց մի բարոյական սկզբունք, որի վրայ յենուել կարողանար այն կուսակցութիւնը թողոր սկզբունքները գրծելոցն նրան. պատճառը, որովհետեւ էն ամենուսեմ սկզբունքը, որը շարժել է Օրիից սկսած մինչեւ Արծրունի կովկասահայ կուլտուրական կեանքի անիւր, էն էական սկզբունքը, որով գոյութիւն ունէր Արծրունու հմայքը երիտասարդու թեան մէջ, այն սկզբունքը, որը պատմական գործիչների ազգմամբ, պարպել էր մշակական կուսակցութեան այրն ու քէն լինելուց: Վա քաղաքական սկզբունքն էր: Վայց նախ քան կուսակցութեան խոր տակնան այդ միակ պատճառը քննել — անպատճառ պէտք է տեսնել կուսակցութեան սխալ կարծիքը դէպի այդ խնդիրը. քանի որ այդպիսի սխալ կարծիքը, բաց ի սուկ հետաքրքիր լինելուց, արել է իւր աննպաստ ազդեցութիւնը ճակատագրական վճիռների վրայ կուսակցութեան հին կշիռը վերականգնելու փորձերի ժամանակ:

1906 թ. Վեկտեմբեր 2ին հայ Վեմեմբերները ժողով կազմեցին Վովկասեան բժշկական ընկերութեան սրահում եւ Մշակի Խմբագիրը մի ճառ արտասանեց որի մի մասը նա կրկնեց տեղատեղը մի թիւրիմացութեամբ. կրկնութիւնից յետոյ էլ ճառի այդ մասը մնաց անփոփոխ: Այդ ճառին մենք դաշարութիւն ենք դարձրել եւ զարմուտ ենք նախ որովհետեւ ճառը կուսակցութեան բացման առաջին ժողովն նշանակութիւնն էր քացատրում, երկրորդ որովհետեւ նա խուսուած է մի այնպիսի ժողովում, որը «Մշակական կուսակցութեան» խորտակուած կեանքի պակասորդ վերջին ակտն է. եւ երրորդ որովհետեւ Մշակի առաջին եւ փորձուած մի խմբագրի յայտարարութիւնն է: Ուստի այդ ճառը բնորոշէ նախադուռն է դէպի քննութիւնը այն խնդրի, որը յիշեցնի իսկոյն: ՎՄթողջ 20—30 տարիներ գործում էինք ժողովուրդի համար, երկրաշարժ, սով, ժանտախտ, կրաշտ, մորիս, քաղաքական արհաւիրք — բոլորը խանակեցինք. դիր, դպրութիւն, մամուլ առաջնորդեցինք. իսկ այսօր մի որեւէ ինքնապաշտպանութեան խնդիր միջ ու մեր գործ յետին շարքն է ձգում: Մենք պարտ ենք ինքնապաշտպանութեան խնդրին այն. քան ծանրութիւն միայն յասկայնել: որ.

քան մեր պաշտպանութիւնը վտանգուած է. իսկ ներկայումս այդ վտանգը չկայ: Համարեա չկայ: Ուրեմն մենք պարտ ենք ապրիլ եւ գործել այնպէս ինչպէս այդ պատահանում է մեր օպուտը. իսկ մեր օպուտը պատահանում է մանկէ տահմանադիր դրօշն տակ, «Այդը է այս խօսքերից, որ լոկ Մշակական լինել ոչինչ է. ինքը Մշակի Խմբագիրը քիչ է տեսնում Մշակական լինելը եւ այդ է էականը. երբ մարդ ինքն է իւր ձեռքը իրեն դէմ ուղղում, պայու է որ ներքին հոգեկան պատուահար տիրում է նրան: Միշտ այդ քայքայումը — անհաստի թէ կուսակցութեան միեւնոյն է — ընդհարման հետեւանք է, իսկ ընդհարումը շարժման: Ինչո՞ւ կուսակցութեան քայքայումը, իրրեւ, իրողութիւն. իրերի դրութեան սխալ ըմբռնումը համապատասխանում է այդ քայքայման: Վուսակցութեան վերականգնման խնդրանքն է հոգը սահմանադիր դրօշն տակ մկրտուելն է ճառախօսի կարծիքով, բայց ինչ է սահմանադիր դրօշը հայկական հարցի համար. Ուստաստանի համար նա ամէն ինչ է, իսկ հայկական հարցի համար — բայց հայկական հարցը, արդարացի նկատողութեամբ մի ժողովականի Վ. Սարուխանեանի, հայ դեմոկրատ կուսակցութեան ծրագրի մէջ չէ մտնում. իսկ հայկական կուլտուրական տարրերը խնամելու մասը ծրագրի մէջ քան հոգութեամբ, ազօտ ատուրագրութիւն ունէր, նկատողութեամբ միւս ժողովականի՝ Ս. Յովհաննիսեանի: Ուստի սահմանադիր դրօշն տակ մկրտուելը, այդ նկատմաներով մի քացարձակ ցանկութիւն է. նա եւ հայկական հարցը անփոխարինող են. եւ եւ պատուել, ուրեմն, այն դրօշը Մշակի կորուած քաղաքական դաւանանքին փոխարինել չկարող. մինչդեռ կուսակցութեան վերակենդանութեան հօգը պէտք է լինէր լցուցանել այն պարապուտութիւնը, որ ատեղձուել էր Մշակի քաղաքական դաւանանքի յարթահարմամբ:

Նրկորդ սխալ ճառախօսք թող տուեց, երբ սկսեց յորդորել թողնելու ինքնապաշտպանութեան խնդիրը, իրրեւ մի ձեռնարկութիւն, որը յանձնարարեց նա աւարտուած եւ վերջնական ցուցակագրութեան հնթարկուած: Նրկայեւ այդ սխալը բառերի միջց կարող է իսկոյն աչքի չգարնել, եթէ միամիլ կն ընթերցողները:

Իսպր բաւական է յիշել, որ Հանրամարդկային կեանքի բարօրութեան հեռաւոր մանրանկարը Երթուհու եւ Կարանդեանի համար միայն ազգային ասպարէզ ունէր, որ Երթուհու վստահութեան քաղաքականութիւնը Սոսսամանի վերաբերմամբ հետեւանք էր այն ընդհարումի, որով քրիստոնեայ եւ ասիտակ ցեղի մի պիտութիւն կամեցաւ փրկել օչ-քրիստոնեայ եւ մտղըլ ցեղից ազգային ինքնուրոյնութիւնը Բալկանեան ժողովուրդների համար, որ տաճարահայի անվաստահութիւնը հետեւանք էր այն ժխտման, որ միեւնոյն քրիստոնեայ պիտութիւնը ցուցել էր Լեհերի ազգային ինքնուրոյնութեան խնդրում. որ նոյն իսկ Կարանդեայի գուռ հայկական ազգային երգերի եւ պարերի տարածման պրոպագանդան, Բաֆիի երկրի սպառումը Երթուհուն եւ Մշակը քաջալերում էին միայն ազգային մտածմանրով. — Բաւական է յիշել, Տաճարեւելու համար, որ ազգային ինքնապաշտպանութեան զգացումը եւ ինդիլը եւ գործը սպառում չեն եւ սպառուել իսկ չեն կարող, ինչ պատահեց յօգուտ այնպիսի սպառման, որինակ, վերջին համազգային ընտրութիւնից յետոյ մինչեւ սպորտ քանի որ այդ ընտրութիւնը գրուել ունենալով Երթուհու ղեկավարութիւնը կատարուեց ազգային գոյքի եւ գոյութեան ինքնապաշտպանութեան զգացման թելադրութեամբ, Սինչ յօգուտ սպառման ոչ մի փոփոխութիւն չկատարուեց ք թէ կտրելի է մի բան ստել, այդ այն է, որ բոլոր պատահածը հակառակ դրութեան է նայեալիցում:

Միայնորից կրորդը եւ ամենամահանդուրժելի ճառախօսի այն կարծիքն է, թէ ինքնապաշտպանութիւնը քայքայեց Մշակական կուսակցութեան եւ մոռացութեան մատնեց նրա ղեկավարներին: Երթ է ամենամեծ կուրութիւնը: Ղառախօսի այդ երակէտը եւ սխալ է, եւ իրականութեան հակառակ է. սխալ է ան որովհետեւ կարելի է եւ լրբերալ լինել եւ ինքնապաշտպանութեան գործից շնտաստանալ քանի որ ինքնապաշտպանութիւնը չէ թէ լրբերալութեան խանգարող որեւէ գործուն տարր հանդիսադնելու նպատակին չէ ծառայում, այլ ընդհակառակն երկրի առաջադէմ տարրերին իւր վերջնական կէտ

նպատակին ծառայեցնելու պահանջ ունի: Իրականութեան հակառակ է, որովհետեւ ինքնապաշտպանութեան գործին համար կրում են եւ մանակցում են Մշակի հին աշխատակիցների եւ շատագոյնների 90 տոկոսը թէ ինչիցիցում եւ թէ մնաւանդ գաւառներում:

Միւս կողմից ինքնապաշտպանութիւնը շատ ուշ շրջանի մէջ գործի անցաւ եւ արտայայտութիւն գտաւ Ղովկասում, մինչդեռ Մշակի կուսակցութեան քայքայումը եւ նրա ղեկավարների մոռացութեան մատանու կանուխ շրջանի նիւթած մի իրողութիւն է:

1903 թ. յունիսի 12ին հաստատուեց Պետերբուրգում Լայոց կառուածրների գրաւման հրամար. ուղղ մի ամիս յետոյ, յուլիսի 13ին, այդ մասին տեղեկացաւ աշխարհքը Մամուլի միջոցով, յանձին Իրաւի Բօտ., «Бирже. Вѣд.», «Рыб. Вѣд.» (Ետոյ ամիս ու կէս անցաւ եւ)գոտոսի 29ին տեղի ունեցաւ վանձակում անդրանիկ ժողովրդական խմբական ընդդիմադրութիւնը. երեք օր անց)գոտոսի 31ին իտիֆիզում արտայայտուեց բողոք («Кавказ», 1 Сент., «Нов. Общ.» 1 Կօ. Աւտ., 2 Сент. 1903 Բ.):

— Ե, յօր մի որեւէ ինքնապաշտպանութեան ինդիլը մեզ ու մեր գործ յետին շարքն է ձգում — իւր այս խօսքերի մէջ Մշակի խմբագիրը այն շարժումն է ակնակում, որ յիշատակած քրոնիկնից յետոյ տեղի ունէր Ղովկասում: Մինչդեռ իրականութիւնը արիշ բան է ստում. որ Մշակի կուսակցութիւնը վաղուց յետին շարքն էր ձգուած, իսկ 1906 թ իւր եկաւ պատմական հարկադրող տարրերի դժով միայն խաջ դրեց այն կուսակցութեան վրայ: Բոլոր ժխտում, բոլոր սկանդալներով, բաւր խմբագրական եւ փողոցային աղմուկներով այդ խաջադրութեան պրոցէսն էր կատարում 1906 թ ուրի իսկ, ինչպէս յայտնի է, կեանքի մէջ այդ մի ամենայնաին բոպէ է համեմատութեամբ այն յանկարծական փոփոխութեանց (պերիպետիաների), որոնց միջից ուժգնապէս գուրս է ձգում մի ստած անշունչ դիակ:

Երթ որոնք էին Մշակի ազատամիտ կուսակցութեան պրոցէսին կանխող փոփոխութիւնները. երբ, ինչպէս եւ ինչո՞ւ կատա

րուեց այդ երբեմն հզօր կուսակցութեան անկումը: Այստեղ է ահա, որ մեր խնդիրը ընդարձակում է 1906 թուի շրջանակից գուրս նաեւ եւ այդ պատճառով նրա թիւը կտառաջադրեմք բնագիրներով՝ կանուխ ասարեքջանների պատմութիւնից, մինչեւ որ իրողութիւնները կը վկայուին բաւականաշուք կերպով:

1902 թիւը Ս՝շակի փառքի վերջալուսի բոլոր յատկութիւնները պատկերազոյն է անխափր մամուլի բոլոր օրգաններում: «Կերթեւօւմ մեր առաջը բերած օրինակներից նկատելի է միաժամանակ այն դիտար նաեւ որի վերջալուսը 1902 թուին արդէն իրողութիւն էր:

Տիգրան Վազարեան, քաջ գիտակ ժամանակի կովկասահայ երիտասարդութեան մտքերին եւ զգացմունքներին վկայում է 1902 թ.՝ «Տարազ, ի թ. 11 մէջ Ս՝արտ 14 կը — «Վեամայ զոյց. Ս՝շակ լրագիրը կատարեալ տգիտութեամբ է այսօր ընժանում, այդ խտտողմանում են ամենքը, նոյն իսկ այսօրայ Ս՝շակին էլ առերես շատ մտախի համարողները, իսկ եթէ այդ մտախի համարողներն էլ ընդ միշտ գեռ չեն հրատարում Ս՝շակից, այդ էլ իր շատ բնական եւ իրաւացի պատճառն ունին: Վաղանիք չէ, որ Ս՝շակն ունի հզօր անցեալ, նրա հետ կապուած են շատ խնդիրներ, ազգի մէջ ունի անուան եւ հռչակ, միեւնոյն է, թէկուզ բացասական գիրք եւ հռչակ: Վճմում, շողքորթում են նրան նոյն իսկ արտասահմանում հրատարակող լուրջ, գիտական հայ հանդեսներ, մի խօսքով այսօրայ Ս՝շակը ոյժ է եւ իր ձիրաններում կարող է խեղդամահ անել հայկական հարիզներ վրայ իրան անխորժ ամէն երես ոյժ: Ըստ փաստարանը, բժիշկը, ինժիները, ուսուցիչն ու արախտը կարող են քաղցած մնալ եթէ Ս՝շակին անհամոյ մի քայլ անեն: Ինող դրանք երրուեն հաւատացնեն, որ այրդպէ չէ, իրանք Ս՝շակից չեն վախենում, այդ սուտ կը լինի եւ ոչ ոք նրանց չի հաւատալ: Ս՝շակի ղեկավարներն էլ այդ քաջ գիտեն, եւ ես ծափահարում եմ՝ վրանց աջողութիւնը, դրանց ոյժը, միայն ավատում եւ անկեղծօրէն ցաւում եմ, որ Ս՝շակի այդ զորութիւնը հայ սպիտակ բարգաւաճման չէ նպաստում, այլ նրա խպառանբարոյականանալուն եւ լւթ-եղան:

Տ. Վազարեանի վերջին խօսքը ձիշք կիրառութիւն չունեցաւ բարեբախտաբար: Լուծուեց, բայց ոչ թէ աղբը, այլ ինքը Ս՝շակը: —

Ս՝շակի Վազարեանի հետաքրքիր երիտասարդ, իւր յօդուածների վկայութեամբ, որ քննել էր մի քանի անգամ Ս՝ուրձի (1900, թ. 5—6. «Վրական բարոյակ. մեր մէջ») եւ Տարազի մէջ (1900 թ. 29, 32. 46) Ս՝շակի վարժանքները, գրում է: «Տարազի 1902 թ. 11. 11 մէջ — Այն ցեալները եւ առիթ եմ ունեցել խօսելու Ս՝շակի թէ բարոյական եւ թէ մտաւոր այն սակայն անկման մասին, որ վերջին ասանամակում հասել են նրա ղեկավարները: Երեսուէր էր, որ դա արդէն մի փչացած շկուլայ է, արատաւոր գրիչներից կազմուած, որոնց համար գոյութիւն չունի ոչ իսկի եւ ոչ էլ իր օտար մարտութիւն առաւել բանը: որ այդ մարդիկ տարինքի ընթացքում անընդունակ են գտնուել լուրջ բանակութեանը:» «Ս՝շակի ինքնաքայքայումը ժամանակի հետ էր զարգանում. իսկ դա շատ էր վտանգաւոր նրա համար. վտանգը ամբողջի կողմից էր, որովհետեւ նրա մէջ էլ էր նկատուել փոքրիշատե գիտակցման շարժում: իսկ դա արդէն Ս՝շակի գոյութեան խնդիրն էր: Ի՞նչ անել: մի միջոց կար, դա փողի ոյժով մտքի մտնողիս ասեղծելն էր. հակառակորդ խոխին զնկրից զոկել:»

Վեորդ Ս՝իլը-Սարազի օգնան միակերպ պնդում է 1902 թ. Տարազի թ. 8 ի մէջ. — Վազ չէք — գրում է նա Ս՝շակի հասցէին, որ խեղդել էք ամէն մի նոր եւ թէ հին գրական ոյժ... դուք չէք, որ տիրելով մամուլին, ոչնչացրել էք քննադատութիւնը: Վոր միտք եւ գրագէտների մի ամբողջ սերունդ: Վայց օրգանի բացակայութիւնը ապացոյց չէ, թէ չկայ ուղղութիւն ու միտք: Այդ շրջանում թերթի հրատարակելու իրաւունք չէր տրուում կովկասահային, եւ միայն Ս՝շակն ու Վոր-Վարին էին միակ բարանը, որով խօսելու հնար չկար այլապէս, քան նոցա խմբագրական տեսակետով եւ նոյն իսկ ոճով:

Սարազի, Ս. Խանազատեանց, Ս. Գրափակեանց գրում են 1902 թիւ Տարազի թ. 12 ի մէջ — Սոյն տարուայ Ս՝շակի, 52 թուում նրա ղեկավարները բացարձակապէս եւ վերջնականապէս ապացուցելու իրանց

երեւակայական ռիմսիական բարձունքից ար-
ձակած «ամբարտաւան» յորորտանքով եւ
արհամարհանքով, որ նրանք ապիկար եւ
անարժան յաջորդներ են Հայ բարբոսութեան
պարագրոս ի՛նչ հանգուցեալ Վրիգոր Ըրծրու-
նուն Պարծենայով «Մշակի» երեսուն
տարւան անցեալով, այնպէս են ձեւացնում
թէ երթի տորմնի ետաւանողները, որ իրենք
էլ Հիմնադրի, նոյն իսկ նրանից ոչ մի բան
պահատ ընթացքով, շարունակում են
գործը, եւ սակայն իւեղում են ամեն մի
Հայ գրական ոյժ, որը հակամշակական է,
Վեռ մեծամտութեամբ վերուստ են, որ
հորիզոնից հեռացրել են — ջնջել այր-
պիտիներին ւայողմախ հասարակութեան
յայտնի է, թէ ինչ հեռացել են այդ լի-
բերալ երեսով եւ Ռուսոսու աստուով
մեծամտներին՝ ժողովարի բարեկամ՝ Հայ
գրական ոյժերը, քանի որ վերջնները ոչ կը
զիջանին զոյու թիւն ունեցող լրագրութեան
մասնակցել եւ ոչ էլ հնարաւորութիւն
ունին նոր թերթի հիմնելու: Ոյն երկաղով
համարմտ հանդիսանալով պ. Սեղբ-Վա-
րագի օգեանի արդար բողոքին, մեր զգուանքը
հրապարակով յայտնում ենք Մշակի
ներկայ վերուստ ղեկավարներին, ինդրելով
խորագրութիւնից, ճարագի մի անկիւնում
տեղ տալ արտայայտելու մեր բողոքը,
Ղեկի նպաստաւոր չէ Ը կրվանգարէի
կարծիքը, եւ այդ իւր իսկ Մշակի վկայու-
թեամբ: 1908 թթ. 52, Մարտ 9 ից
Վրայնթար Սեղեկոտանի մէջ գրում է —
Ը յար Ը կրվանգարէն ու գում է, որ մենք
ձանաչենք նրան հակաակորդ: (Կայք թիւ
իրաւունքով: Վա ինքը երբ եւ ից ձանա-
չել է մեզ իրեւ անձնա որութիւններ,
հասկացել է, որ իր զիմացինն էլ մարդ է,
որին պէտք է փոքրիշատէ յարգել, որի վե-
րաբերմամբ պէտք է բնույնն էլ, թէ նա էլ
ունի հասկացողութիւն սեպհական պատու ի
արժանաւորութեան մասին: Սարգսո ա
նունով Ը կրվանգարէն 1896 եւ 1897
թուերի մէջ ամեն շարաթ բղաւել է թէ
Մշակի մարդիկ ոչնտութիւն են, գրական
գործիներ չեն, այլ վարձկաններ, որ պէտք
է արհամարհել ծաղիւն ցեխտեղ Մշակն
էլ եւ նրա աշխատակիցներին էլ:»

Մինք այսքանը բաւական ենք համա-
րում եւ չենք արտագրում Ը ղանապարի
Սոսունի, Սոսայի, շանդէս Վրականի, եւ

Վրայնթար վկայութիւնները: մինչեւ այժմ
տեսնել Մշակի եւ առաջուր երիտասարդ
անհատների պատակտունն, այսուհետեւ ցոյց
տալու համար որ պատակտունը ոչ միայն
Մշակի եւ անհատների մէջ էր, այլ եւ
Մշակի եւ ամբողջ երիտասարդութեան մէջ
կը յիշենք Մշակի վկայութիւնները: Ը
արդարեւ՝ հին ազատամիտներից հեռանալը
կատարուել է ոչ միայն հատ հատ մտածող
եւ գրող ոյժերի կողմից, այլ եւ խորպին
ամբողջ երիտասարդութեան կողմից: վեր-
ջինս սկզբում հետեւում էր ազատամիտ
ներին իսկ վերջում թողել եւ հեռացաւ:
Մշակից՝ 1902 թ. Վեկտ. 8 թ. 271
Մշակի մէջ Վրայնթար այդ տիտար
երեւոյթը նկատելով, յորդոր կը կարգույ
չուրանալ Մշակը եւ կիսովհաստ ոգուով
աղաղակում է. «Յիշե՛ք որ դուք եր-
գուել էք հաւատարիմ՝ մեզ հասարակա-
կան գաղափարներին: Ինող չը շաքնէ ձեզ
հարստութիւնը, չկարցնէ անձնական վար-
կիքի հրաւերը եւ չկուրացնէ ձեզ ինտախ-
կան հաշիւը: Սթափուե՛ք բաւական է,
որքան դուք յեղ (?) ուրացար:»

Իայց այս յորդորը մնաց անհետեւանք:
զինքը Ը ղողները չվերադարձան դեպ ի
ազատամիտները: շուտէր տուող ցաս-
մակալած հագով ? որ յետոյ յայտնեց,
որ Մշակիականների ցուցակը դարտակուած
է. եւ թէ ուրացող եւ թիկունք դար-
ձնողների տիպից դուրս է կան եւ ուրիշ
հետաքրքրական տիպեր, որոնք պիւլած են
մեր կեանքի ասպարէզում: շաքունի մէջ
նրանք կան բայց իսկապէս մեզ համար զոյու-
թիւն չունին. ասում էր ինձ մի բարեկամ.
նա բերաւ մի ցուցակ, որի մէջ նշանակած
էին գործող ինտիլիցենտ համարվող անձանց
մի խոշոր թիւ: Սկսե՛ք ջնջել, ասաց նա.
տեսնե՛ք ինչ գուրս կը գայ: Ը նասարներին
բուրժուացածներին, զաւանաններին ջնջե-
ցի՛նք. շատ քիչ բան մնաց. վատ տրամադրու-
թեան մէջ մենք բաժանվեցինք, (Մշակ
1902, Վեկտ. 15.):»

Ը յս տողերը Մշակ հիւրընկալում էր
իւր երեսնամեայ հասակում: Սակայն թիւը
տիրական է, բայց ոչ ինտարիքալ: Ը յու-
րովհետեւ դեռ նրա համար պարզ չէ, որ
իւրաքանչիւր երեւոյթ իւր գաւարանական
պատճառականութեամբ հաստատ է. որ
ցուցակներ պահելով եւ անուններ ջնջելով

Հասարակութեան կեանքի հոսանքները ոչ կարող են դադարել եւ ոչ յետ դառնալ. որ անողք պատմութիւնը ամեն հրաւեր կարգացողի աղմուկ ու շարժում թեան չէ առնում:

Խմբական որժերի կողմից Մշակի իրրեւ մի յայտնի ուղղութեան օրգանի մտացութեան մասնուիլը բունաւոր պատճառներ ունէր, որ վերջում պէտք է պարզենք. բայց Մշակի իրրեւ մի խմբագրական կազմակերպութեան մտացութիւն անհասկանալի էր այն ժամանակ այն կազմակերպութեան զիկավարներին համար: Այլ իրիւններն մի շարք յօդուածներ գրեցին, որոնք բովանդակութեամբ չէ, այլ միայն վերնագրերով ու շարժում թեան արժանի զարմանտ — Պատահում պէտք է տալ: Իւր են գործողները, Մասնակցեցէք գործին, Խորրը պէտք է աշխատին, Եւ այդ ասպարէզում, Անասարար ոգի է հարկաւոր, Բաւական է, Եւ միջոցներով եւն եւն, Եւ վերնագրերը սխալմամբ մեծամասնութեան նշան էին համարուում այն ժամանակ. բայց առաւել հազարաւորն այդ բացականութիւնները ընական է հասկանալ. նոքա վերջին ձիգ են մի հիասթափուած գործիչի. մի խորասուզուող, անօգնական հորմահայածի վերջին կենդանութեան նշան են:

Իրրեւ մի երեւոյթ, որ ծաւալում էր Ղովկասի ամրոցը երիտասարդութեան, Մշակի լքեալ ձգուիլը Ղովկասի մասնուիլը բոլոր օրգանները ու շարժում թեան առանձնաբաւում հրատարակուող մի թերթ գրում էր — Հայ երիտասարդ ինտելեգենցիայի ընտիր ներկայացուցիչները մտածող մարդիկ են, ընդունակ են հոգեկան վշտի, եւ պատրաստ են ի հարկէ անձնատուր լինել Հասարակական գործի. եւ նոքա չեն մեղաւոր, որ իրենք առաջ են գնացել եւ իրենց ետեւում շատ յետ է մնացել սառած Մշակը՝ իւր սանտիմենտալ ցնորքներով դէպի ցանոց եւ հնձող մեքենաները «Ես» (թ. 82, 1903). Մշակ ըրգիրը այլ կերպ է մտածում եւ դրա մէջ է իւր մեղքը. նա յետ է մնացել կեանքից, սանել է հին մեռած Փորմուլաների մէջ եւ երկարում է թէ բաւական է որ գիւղը մուծուի ցանոց եւ կարող մեքենան եւ ահա գիւղացու կեանքը իսկոյն կը փոխուի, գետերից կաթն կը վազէր եւ երջանկութիւնը ընդարձակ ալիքով կը հեղեղէր մեր

բոլոր գիւղերը... բայց այդպէս մտածել կարող են միայն միամիտ, կարծառեւ մարդիկ:

«Մշակ», Ես»-ի 1903 թ. 73 Վարտ 30 յօդուածին պատասխանել էր այն յօդուածի մէջ Ես» ինտելեգենցիայի վիճակն էր քննում. բայց Մշակ անպատասխան թողք Ես»-ի թ. 83 Վարտ գուածը, ուր յօդուածագիրը Մշակին էր քննում: Պատասխանի փոխարէն Բաբանութար լուց, իսկ Մշակ թ. 82 Ես»-ի 19 Համարի մէջ Ես» ստորագրութեամբ գրեց. — «Ես անկարող եղայ, ինձանից անկախ պատճառներով, պատասխանել պ. Ստարոցեվի այս վերջին յօդուածին եւ ստիպուած եմ լուր թեան տալ այն ամենը, ինչ ունէի ասելու պարտին»: (Նորոշէլ պատասխան է սա. երբ ինտելեգենցիային Հայհայել հարկաւոր է Ես» արգելք չունի, իսկ երբ Մշակը գատապարտուած է եւ պաշտպանել հարկաւոր է Ես» արգելքներ օւնի: Պարզ է, որ Ես» Մշակի աշխատակցութեան պարտաւոր սահմանների մէջ անկարող էր իւր ասելու ցածր այն ժամանակը սակ Ես»-ի պարտին:

Հայ ինտելեգենցիայի եւ Մշակի յարաբերութիւնը մեկնում է նաեւ Բազում հրատարակուող մի ուրիշ թերթ Ես» թ. 44, 1903 եւ Մշակի պատասխանը թ. 42, 1903, «Ես»-ի 1902 թ. վերջին գրքի մէջ «մեռուոր. ի յօդուածը եւ Մշակի պատասխանը» «տակաւոր անկարողութիւնը»: «Нов», 0608. 1903 թ. Սարտ 7 ի համարը. եւն եւն:

Մասնուիլ բոլոր օրգանները Մշակի եւ ինտելեգենցիայի պատակտու մը գաղափարական իմաստով կին հասկանում. այդ նրա համար, որ ամենամեծ պատճառը գաղափարական իմաստն էր. բայց կար մի պատճառ եւս, որը նշանակութեան ունէր պարտական ինչու, բայց որը ներթական ընտրութիւն ունի, այն է Մշակի իրրեւ թերթի աղքատ բովանդակութիւնը. Եւ զարմանալի չէ, որ գաղափարի սնանկութեան կից երեւան գար նաեւ բովանդակութեան սնանկութիւն. «Սուրճը, ինչպիսի կրկնորդ մեկնութեան բացարձակ նշանակութիւն է ստալու. նա գրում է — շինք ամենօրեայ ուսուց թերթերի բաժանորդները գերադասում են օտար թերթերից եւ հանդէսներից մտաւոր սնունդ ստանալ, յագեցնել իրանց մտաւոր ծարաւը, Եւ

այդ շատ բնական է. այդ աղբիւրները մեծ մետաքի աւելի առատ, սննդարար եւ հետաքրքրական պաշար են տարին, քան ազգայինները: Եթէ մի ժամանակ Եւրոպայի մասին, «Մուսկոլ», նոյն իսկ «Մշակ», իրանց արծարծած տարրական գաղափարս ներքով, իրանց միամիտ գրական ձեւերով, իրանց համեմատարար միակողմանի եւ աղքատ բովանդակութեամբ որոշ չափով գոհացնում էին այն ժամանակուայ մեր ընթերցողներին, որոնք սովոր չէին դեռ եւս համեմատութիւն անելու օտար նմանօրինակ օրգանների հետ, այժմ այդէն ընթերցողի ծաշակը նրբացել է, պահանջը զարգացել, համեմատութիւնը աչքի առաջ է: յամանակի հետ անխուսափելի են եւ փոփոխութիւններ: 1903 թ. Մուսկոլ, 6. Սոստաչոց մամուլի դրութիւնը:

Մուսկոլ այս նկատուածիւր ընդհանաբ հորիզոնի պատկեր է. որշակի պակասութիւններին բնաւ որութիւնը Մուսկոլի յօդուածի մէջ չէ ցուցած. այդ պակասը կը լրացնենք այստեղ ինչպիսի շոշափելի կերպարանք տալու համար:

Մշակի մէջ մի շարք յօդուածներով Վարանձար յորդորում էր գիւղատնտեսութիւնը բարելոցելու ամենից օւելի գրականութիւնը — Տուէք մի դիւրմբումներ, ինչպիսի կերպով կազմուած գիրք երկրագործութիւնից, մի ուրիշ միջոցաբաժնութիւնից, մի երրորդը կամ նասնտեսութիւնից, չորրորդը, հինգերորդը շերտամաս հութիւնից, այգեգործութիւնից, գինեգործութիւնից եւ գիւղատնտեսութեան ուրիշ ճիւղերից եւ գուք կը տեսնէք, որ նրանք կը նուաճեն ընթերցողների նորանոր խաւեր: Մշակ 1902, թ. 188. «Տեղեակ չլինելով թէ ինչ է աւելի համապատասխանում մեր ժողովրդի սրտին եւ եւ զգացմունքին, մենք տեսնում ենք նրան սառն անտարբեր մեր գործերի վերաբերմամբ եւ մեռում ենք վարմացած»:

Նորպէս իտաղ հեղինակը, ըստ երեւուելին, տեղեակ է. թայց նա է որ ամենից անտեղեակն է: 1890 թուից սկսած մի հեղինակ Ս. Միլիք Է ահա շարքեան փորձից եւ գիտանտեսական գրքեր հրատարակից: Բայց նորա գործը քաջաբերութիւն չտաւ: Եւ նա զանազան պարզաբան խազարներով զբաղուեց:

Բայ ի այդ 1894 թուից մինչեւ 1902 թիւը Մշակի կամրագիրներն ու աշխատակիցներն էին Լուսա. ընկ. ղեկավարները: 120 գիրք տպուեց այդ շրջանում, նրանցից չորսը միայն գիւղատնտեսական բաժնից. ուրեմն 2 տարին մի գիրք: Գործը ցուցեց, որ հաստատիր եւ թանգ «Նա Նրթաս», աւելի է պահանջուում քան բարակ տետրակ գիւղատնտեսութիւնից: Կնքը Մշակի կամրագիրը լու գիւղատնտես է: Բայց իւր մասնագիտութիւնից ոչ մի բրոշուր չէր չորեք հայերէն իւր ամբողջ կրպակում: Թէպէտ չգաղարեց յօդուորեց, որ ուրիշները գլին, ծախս քաշեն, հրատարակեն:

Մշակի քարոզչակի եւ կեանքի պահանջների հակընթացը Մշակի էջերում անբաժան մի շարքի հետ բաղադրուած է հանդէս դալու: Մտքերի ամբողջութիւնը բացակայում է բոլոր յօդուածների մէջ: մենք նմուշներով ենք բաւականանում. Ի՞նչ նհրածեշտ է, որ երեւան գային հրատարակիչներ, եւ ձեռնարկէին ժողովրդական ընթերցանութեան գործին որոշ սխաւտեմով եւ հստութեամբ: Սրբան էլ դեռ քիչ դարգացած լինի ընթերցասիրութիւնը մեղանում, այնուամենայնիւ հրատարակչական գործը: Եթէ ինչպիսի հիմունքների եւ ժողովրդական պահանջների վրայ հաստատուած լինի, կարող է աշղուութիւն ունենալ եւ իրբու ձեռնարկութիւն անշնաս լինել կազմակերպողի համար, բաւարարութիւն տալով միեւնոյն ժամանակ կեանքի կարեւոր կարիքներից մէկին (Մշակ թ. 183 1902.) յոտ երեւութիւն ամեն ինչ ստուած է: Ընի մի միտք է յայտնուած: Բայց որքան թէութիւնք, ահա. կարող է, եթէ, որքան էլ, ինչպիսի հիմունք, ժողովրդական պահանջ է կեանքի կարեւոր կարիք. եւ վերջապէս որոշ յօրինուածութիւն եւ հստութիւն: Ըստ Տեղեկագրու. որ անձնաբերութիւնների վարդապետութիւնները հնութիւն է հատուում, թայց Մշակի ղեկավարների համար Միթրուձու իրատանը միշտ կենդանի եւ անձուայ պէտք է լինեն, որ չեն. — Երկու հար կայ մարդիկն ինն մտածել սովորեցնելու, գրում է Մշակի հիմնադիրը իւր Մշակի ծնունդից առաջ: այդ հնարներից առաջինը այն է, երբ գրողը առաջապիւում է հաստատութեանը կատարեալ գաղափարներ, կատարեալ մտքեր:

Երկրորդ այն է, երբ գործը հասարակութեանը ներկայացնում է նորակերպի պակասութիւնները Գ. Երծրուհի. էջ 276. 1 էօ :

Խօսքի եւ գործի հակասութիւնը նոյնպէս Սշակին յատուկ էր այդ շրջանում : Երբ փակուեց արտաքին կարգադրութեան ոյժով շրատ. ընկը, Վլայանթար եւ Սալխասեան ընկերութեան ամենամօտ կանգնած մարդին էին, եւ Հասարակութիւնը, Սշակի բոլոր քարոզներէից յետոյ, իրաւունք ուներ յուսալ, որ մի նոր հրատարակչական գործ կը սկսուի նրանց ղեկավարութեամբ : Ի այց փորձը ցոյց տուեց, որ նրանց խօսքը նրանց իրենց համար պարտաւորեցուցիչ չէ : Ըստ որում իրենց հմտութիւնը, փողը, ընկերակցութեան ոգին նոքա միացրին, կուուածք գնեցին, կաթնաստանութեան օւ պանրագործութեան ազրակ մշակեցին. քարոզում էին գրքեր հրատարակել ժողովրդական գրագրարանը հարստացնել, գնացին կովեր բազմացրին :

Սեր նպատակից եւ հնարաւորութիւնից վեր է աւելի երկարել այս շրջանի կեանքի եւ գրականութեան մասին. թէպէտ զրա համար բոլոր գիտութիւնը տալիս է մեզ մեր մի աշխատութիւնը 19րդ դարու վերջին քառորդի մեր մտաւոր շարժման մասին լրովասում, նիւթերի գասաւորմամբ, ծրագրով եւ լուսարանուած հարցերով : Ե. յատեղ պարտ էինք մատնանիշ անել, որ նախ քան 1903 թիւը Յունիս 12ը Սշակիան կուսակցութեան եւ երկրի ինտելեգենցիայի յարաբերութիւնը պատակասուած էր : Երողութիւնը միանգամ ստուգելուց յետոյ այսուհետեւ պարտ ենք այդ եւ միւս յիշուած իրողութեանց իրաւական պատճառաբանութիւնը պարզել, մեր բուն ինդրին շատ հասնելու համար իսկ մատնանիշ եղած շրջանի մանրագրատում ստորագրութիւնը առ այժմ պարտ ենք թողնել : Սակայն արդէն իսկ նկատել հարկաւոր է, որ իւր մանրագրատում ստորագրութեամբ հանդերձ այն շրջանը չէ բովանդակում որոշ պատկերը այն հոսանքի, որ ստացուեց վերոյիշեալ պատակատմամբ : Սր հոսանքը, իբրեւ բողբոջ ոյժ հայկական ժամանակակից կեանքի դէմ գոյութիւն ստացաւ, որ հին 80ական թուականների սերունդը յետին կարգը ձգուեց այն հոսանքի երեւան գարով : որ Սշակիան կուսակցութիւնը, այդ պատ-

ճառներով, ամենից շատ եւ իխտ զինուեց ինքնապաշտպանութեան զգացմունքի ազդումով — այդ շրջանի մէջ բովանդակուում է. բայց ոչ ոք գեռ կարող էր ասել, թէ ինչ էր այն նոր հոսանքը նախ քան 1903 թիւը Յունիս 12ը, այն է ինքնապաշտպանութեան գործի երեւութական սահմանը : Տեսնում ենք որ նրա բողբոջ իտր էր, կամքը ոյժեղ, եւ վճիռը զէպի հին հոսանքը անքակ նա անհաշտ էր, ժխտող էր, բայց այդքան միայն. իսկ իրէանները պարզուած չէին, հաստոյց հանգանակը յայտնի չէր հասարակութեան, յեղափոխիչ փայլը չէր բնորոշուած որեւէ գործի մէջ : Ե. յայտն էր մինչեւ 1903 թիւը Յունիսի 12ը. եւ այդ հանգամանքը ինքեան գալիս է վկայելու, որ ինչպէս հակառակորդ ազատամտները կրկնում էին 1906 թուին, նոր հոսանքը Ռայֆայականութիւն տերմինով չէ սահմանուում, մի իւումք լանկնէրի շարժումն չէ, որոնք առակի նոր հաւի նման երկաթի ձու են գնեցիս եղել 1806 թուին ազատամտների համար. այդ կարծիքն էլ Հայ ղեմոնիրատների ժողովում կուսակցութեան հիմնադիր անդամը յայտնեց : Ի ոլոր իմբակցութիւնները, բոլոր Ռայֆայականութիւնները իրենց միութեան հիմքում ունենում են որոշ նպատակ. նրանով նոցա միութիւնը հաստատ եւ կենդանի. եւ նրանով է նրանց կազմութիւնը եւ ծագումը պայմանական եւ արհեստական : Հասարակական կեանքի մէջ պատմական հոսանքները ծննդեւմբ եւ զարգացմամբ, ընդհակառակին, անկազմ բնոյթ են օւնենում : սկզբում նրանք անորոշ սաղմ են. խմորուում են փոթորկի ժամանակ, եւ որոշ պատկեր, բնաւորութիւն, եւ ոյժեղ մարմնացումն են ստանում ճակատամարտի մէջ : Սեր անարկած նոր հոսանքը եւս մինչեւ 1903 թիւը 12ը յունիսի (այդ ի հարկէ պայմանական հասկանալի) անորոշ սաղմական վիճակի շրջանում էր ապրում, հասարակութեան բազմութիւնը նրան դեռ չէր շնորհել իւր բարի կամ չար համբար եւ իւր ներկայութիւնը ինքը այն հոսանքը եւս չէր ցուցել բազմութեան մէջ : Ե. յի բոլորը թողնուած եւ վիճակուած էր հետեւեալ շրջանի մէջ ի կատար ածել :

(Ըրումակիւն) ԳՐ. ՅԵՐ. ՊՈՂՈՍՅԱՆ